գործմանը։ Մինչդեռ Հայոց մէջ եղել է մի ժամանակ, և այն ԺԷ. դարում և յետոյ, երբ վարդապետներն ուղեցել են հասկանալ, թէ Ս. Էջմիածնում գտնուող աջը Ս. Լուսաւորչի ո՞ր ձեռքն է՝ աջ թէ ձախ, կամ թէ ո՞րն է իսկականը՝ Սսի աջը թէ Էջմիածնի։ Այս հարցերից երևում է, որ Սիս ևս մի աջ կայ եղել։ Բայց Առ. Դաւրիժեցին, հանգամանօրէն յառաջ բերելով զանազան յիշատակարաններ բացատրում է, որ Ս. Լուսաւորչի աջ բազուկը գտնուում էր Սսում, 1439 թուին այնտեղից գողացել են, յետոյ 1441 թուին զարմանալի կերպով նոյն աջն յայտնուել է Ս. Էջմիածնում և մնացել է այնտեղ ընդ միշտ։ * Գրիգոր Ժ. Մակուեցին, որ Կիրակոս վիրապեցու փոխանակ կաթուղիկոս ձեռնադրուեցաւ 1443 թուին, իւր մի կոնդակի մէջ որ 1445 թուին տուել է Մշու վիճակի ժողովրդին, բազմաթիւ մասունքների և Ս. Նշանների շարքում յիշում է Ս. Լուսաւորչի աջը, որով եպիսկոպոս է օրհնել Ս. Կարապետի վանքի առաջնորդին։ 1460 թուին Աղթամարայ Զաքարիա կաթուղիկոսը, բռնաւոր Ջահանշահի սիրելին, նորանից իրաւունք ստացաւ Ս. Էջմիածնի կաթուղիկոսութիւնն ստանձնելու. յիշատակարաններն ասում են, որ Զաքարիա պատուական ընծաներով գնաց

* Առ. Դաւր. Լ.